159 Մի՛ տխրիր, մի՛ դժգոհիր դու նրա համար,

1. Մի՛ տխրիր, մի՛ դժգոհիր դու նրա համար,
Որ հանդիպել ես դժվարության,
Որ խաղաղ գարնանը սպասել ես շատ երկար,
Հիսուսով կստանաս անպայման:

Մեզ համար, մեզ համար գարուն հրաշալի՝
Հոտավետ ծաղիկներով լցված,
Ուղարկում է Աստված գարուն հիանալի՝
Գողգոթայի խաչով ստեղծված:

2. Ով որ իր երիտասարդ կյանքը նվիրի
Ծառայելու Արարիչ Աստծուն,
Նա իր ծերության օրերում նույնպես կապրի
Աստծուց տրված հոգևոր գարուն:

3. Մենք ձգտում ենք, որ կյանքի գարնան արևը
Փայլի մեր ծարաված սրտերում,
Եվ Աստծո Հոգու հրաշալի պտուղները
Սուրբ գարնան հետ աճեն մեր հոգում:

4. Մեզ օգնի՛ր, որ լինենք Քեզ միշտ հավատարիմ,
Սուրբ կյանք ապրենք երկրի վրա,
Որ մեղքը չհաղթի նույնիսկ մեկ տկարին,
Եվ գարնան մեջ ապրենք հավիտյան: